

ԳԱՅԱՆԵ ՆՈՐԱՅՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԵՊԿ Ժամանակակից հայոց լեզվի ամբիոն

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ԱՐԴԻ ՆԱՅԵՐԵՆԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ

Դարձվածքները կամ դարձվածաբանական միավորները ժողովրդի հոգևոր մշակույթի յուրահատուկ արտահայտությունն են, բառերի այնպիսի կապում կապակցություններ, որոնց բաղադրիչները, գրկվելով իրենց բուն իմաստից, միասնաբար մոր, փոխաբերական-այլաբանական իմաստ են արտահայտում՝ արտացոլելով տվյալ ժողովրդի լեզվի և մտածողության ինքնատիպությունը, գունեղությունն ու պատկերավորությունը: Ստեղծվելով հիմնականում բանավոր ճանապարհով՝ դարձվածքները կազմում են խոսակցական լեզվի բառապաշարի ամենաբնորոշ շերտը: Ոչ մի լեզվական ոճ, մույնիսկ գեղարվեստականը, այնքան հարուստ չէ դարձվածքներով, որքան խոսակցականը:

Այդ է պատճառը, որ, ուսումնասիրելով դրանց առանձնահատկությունները, մենք առավելապես կխոսենք դարձվածքների՝ խոսակցական լեզվում կատարած դերի ու նշանակության մասին:

Դիտարկելով դարձվածքների կառուցվածքային-ոճական առանձնահատկությունները որպես կարևորագույն հատկանիշ՝ պետք է նշել նրանց *վերարտադրվելու* ունակությունը: Դարձվածքային միավորները խոսքի ընթացքում կրկին ու կրկին չեն ստեղծվում: Դրանք մարդկանց հիշողության մեջ վերարտադրվում են պատրաստի ձևով և որպես այդպիսիք՝ կիրառվում խոսքում: Այս հանգամանքով է պայմանավորված դարձվածքների երկրորդ կարևոր յուրահատկությունը՝ դարձվածաբանական միավորների բաղադրիչների *ամբողջականությունը*, որն էլ իր հերթին պայմանավորում է նախադասության մեջ դրանց կատարած շարահյուսական գործառնության միասնությունը: Ամբողջականությունը դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստն է, որը չի համապատասխանում դարձվածքը կազմող առանձին բառերի բաղադրիչների բառային իմաստներին: Այստեղ գործում է բաղադրիչների բառային անբաժանելիության նկզբունքը, իմաստային ինչպես բացարձակ սերտաճումը՝ զոդվածությունը, երբ դարձվածքի իմաստը չի բխում նրա բաղադրիչների բառային իմաստներից (գլխի ընկնել, գլուխը աղալ, գլուխը յուղել), այնպես էլ այնպիսի դարձվածաբանական միավորներից, որոնց բաղադրիչները մույնպես անբաժան են, բայց դարձվածքի ընդհանուր իմաստը որոշ չափով պատճառաբանված է (աչք գցել, վիզ ծռել, գլխին տալ):

Լինելով կապում կապակցություններ՝ դարձվածաբանական միավորների բաղադրիչները համարյա *միաձույլ* են, որոնք թույլ չեն տալիս լեզվական այլ միավորների «ներթա-

փանցումը»¹, իհարկե, այս առանձնահատկությունը բացարձակ չէ. հետաքրքիր օրինաչափություն է նկատվում. երբ բառակապակցությունն ունի ուղիղ, ոչ փոխաբերական կիրառություն, ապա դարձվածքային բաղադրիչների միասնությունը հնարավոր է «խախտել» այլ, օտար բառերով: Այսպես՝ *տունը քանդվել* բառակապակցությունն ունի ուղիղ և փոխաբերական կիրառություններ: Երկրորդ դեպքում դարձվածքային միավորի միասնությունը խոսքում կարող է «խախտվել» կողմնակի բառերով՝ *տունն հիմնահատակ քանդվեց*, *տունն ամբողջովին քանդվեց* և այլն: Սրան հակառակ՝ կան միայն այլաբանական իմաստով կիրառվող բառակապակցություններ, որոնց բաղադրիչները խստորեն պահպանում են իրենց միասնությունը, ինչպես՝ *լեռին պատռվել*, *աչքը կաշել*, *լեզուն կապ ընկնել* և այլն:

Հայերենում ոչ բոլոր բառերով է հնարավոր դարձվածքներ կազմել: Բառամթերքի հարստացման տեսանկյունից դարձվածքները կարելի է բաժանել երկու խմբի.

Առաջին խմբին են պատկանում այն դարձվածքները, որոնք հակադրվում են միևնույն կազմությունն ունեցող ազատ բառակապակցություններին. դրանք առաջանում են ազատ բառակապակցությունների փոխաբերական վերաիմաստավորման արդյունքում, որոնց կազմում առկա են առավել գործուն բառեր, ինչպես մարմնի մասերի, կենցաղային իրերի, սննդի պարագաների անվանումները: Կիրառության լայն ոլորտներ ունենալու շնորհիվ այս բառերը դարձվածքներ կազմավորելու մեծ հնարավորություններ են ցուցաբերում: Օրինակ՝ *գլուխ հանել*, *գլխին մատել*, *գլուխը կտորել*, *ոտքը պնդացնել*, *դանակը ոսկորին հասնել*, *երեսին տալ*, *սիրտը թնդալ*, *սիրտը պայթել*, *սիրտը չոքերն ընկնել*, *սիրտը ճաքել*, *սրտից արյուն կաթել* և այլն:

Երկրորդ խմբի դարձվածքները պատմական հիմք ունեն կամ կազմված են բառային հնաբանություններից: Օրինակ՝ *Աբրահամի գառ*, *ձայն բարբառող յանապատի*, *ակն ընդ ական*, *ատամն ընդ ատաման*, *հայկական հարց*, *անարգանքի պլունին գամել*: Այս խմբին կարելի է դասել նաև անտիկ զրականության, հին հայկական, հույնական և հռոմեական դիցաբանության հետ կապված զանազան տիպի դարձվածքներ, դարձվածքային արժեք ունեցող զանազան պատկերավոր արտահայտություններ, թեև վոր խոսքեր և այլն, ինչպես՝ *սիզիփոսյան աշխատանք*, *դանայան տակառ*, *դամոկլյան սուր*, *համբերանքի չիբուխ*, *աքիլլեսյան գարշապար*, *տրոյական ձի*, *հոմերյան ծիծաղ* և այլն:

Այս խմբի դարձվածքների թվին են դասվում նաև աստվածաշնչյան ծագում ունեցող դարձվածաբանական միավորները, որոնք լայնորեն կիրառվում են թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքերում: Օրինակ՝ Նոյի ագռավ /հատուկ հանձնարարությամբ մի տեղ ուղարկված և չվերադարձած մարդ/, Բաբելոնյան աշտարակաշինություն /անկարգություն, անբարեկարգ վիճակ/, ոսկե հորթ /փող, հարստություն, ոսկու իշխանություն/, անառակ որդի /չար, անկարգ, ծնողների չհնազանդվող, ծուռ ճանապարհով գնացող զավակ/ և այլն: Ինչպես երևում է օրինակներից, աստվածաշնչյան ծագում ունեցող դարձվածքներն արմատացել են ժողովրդի լեզվամտածողության մեջ՝ իրավամբ դառնալով նրա սե-

¹ Տե՛ս Ա. Մ. Մուրիասյան, Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 8-9:

փականությունը, և չնայած սկզբնապես առաջ են եկել գրավոր խոսքում /ինչն ավելի հագ-
վադեպ է նկատվում դարձվածքների կիրառության և տարածման գործընթացում/, այնու-
հետև անցել են բանավոր խոսքին՝ իրենց արժանի տեղը գտնելով այնտեղ:

Պետք է նկատել սակայն, որ երկրորդ խմբի դարձվածքներն առավել գրավոր, քան բա-
նավոր կիրառություն ունեն, իսկ առաջին խմբի դարձվածքները խորապես ժողովրդախո-
սակցական միավորներ են. առաջանում են բանավոր ճանապարհով և հիմնականում կի-
րառվում խոսակցական լեզվում:

Ոճաբանորեն դարձվածքները խստորեն տարբերվում են բառերից: Բառերի հիմնա-
կան մասը ոճաբանորեն անկախ է՝ ի տարբերություն դարձվածքների, որոնց հիմնական
գծանակությունը խոսողի գնահատականի և վերաբերմունքի արտահայտությունն է:

*Ոճական կիրառության տեսանկյունից դարձվածքները կարելի է բաժանել երեք
խմբի²:*

Դարձվածքների զգալի մասը կազմում է *խոսակցական լեզվի* բառամթերքի կարևոր
շերտերից մեկը: Այդ դարձվածքների կիրառության ոլորտը շատ լայն է. դրանց պարզ,
խոսակցական տարբերակները գործածվում են ամենօրյա կենցաղում՝ առավել պատկե-
րավոր դարձնելով խոսքը, իսկ որոշ դեպքերում ունեն կոպիտ, ցածր ոճի երանգավորում,
ինչպես, օրինակ՝ *գլուխը տանել, ոտքի տակ ընկնել, վեր-վեր թռչել, քիթը քաշել, քիթը
տնկել*, հանդիպում են նաև օտար բառերով կազմված դարձվածքներ՝ *զահլա տանել, զոռ
տալ, թոզ փչել, դավերյա անել, պաղդերժկա անել, մադայել լինել* և այլն, որոնք խոսքը
դարձնում են գոեհիկ և կոպիտ: Բերված վերջին օրինակները կարելի է դասել մոր շրջանի
հասարակաբանությունների շարքին:

Խոսակցական լեզվում շատ են նաև ծաղրական երանգ ունեցող դարձվածքները. այս
դեպքում դարձվածքային միավորը ոչ այնքան արտացոլում է իրականությունը, որքան
գնահատում է այն՝ արտահայտելով խոսողի արհամարհանքը, հեզմական վերաբերմուն-
քը տվյալ երևույթի նկատմամբ, օրինակ՝ *սովի տարած, էշի ականջում քնած, կատու դառ-
նալ, հոր գին դնել, Քաջ Նազար, լեզուն պապանձվել* և այլն:

Որոշ խոսակցական-հասարակաբանական դարձվածքներ սաստկական իմաստ են
արտահայտում, որտեղ խոսողի զգացական վերաբերմունքն ավելի ընդգծված է: Օրինակ՝
*կոկորդ կրծել, ռեխը բացել, հալից-հարաքյաթից ընկնել, չողը տանել, լեզուն պապանձվել,
սիրտը պատռվել, բերանը կոտրել* և այլն:

Հաջորդ խումբը կազմում են *միջոճական դարձվածքները*, որոնք որոշակի ոճական
երանգավորում չունեն և լայնորեն կիրառվում են թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքերում:
Դարձվածքների այս տեսակը մեծ չէ. սրանց կազմավորմանը մասնակցում են բառեր,
որոնք որոշակի բառային շերտի չեն պատկանում, իսկ կազմված դարձվածքներն ընդհա-
նուր առմամբ զուրկ են փոխաբերական իմաստից, օրինակ՝ *ամեն գնով, ամեն քայլափո-*

² Տե՛ս Լ. Եզնկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, էջ 185-188:

խի, իրերն անվանել իրենց անուններով, այսպես կոչված, վաղ թե ուշ, բառիս բուն իմաստով և այլն: Սակայն լինում են դեպքեր, երբ այսպես կոչված չեզոք դարձվածքներն ստանում են գնահատողական երանգ:

Վերջին՝ երրորդ խումբը կազմում են *գրքային դարձվածքները*, որոնք հատուկ են գրավոր ոճին և խոսքին հաղորդում են հանդիսավորություն և պաշտոնականություն: Դարձվածքների այս տեսակը կրում է գործնական, հրապարակախոսական բնույթ: Այսպես՝ *շեփոր հնչեցնել, սուր ճոճել, ի խորոց սրտի, հարգանքներին հավաստիքը, ի լուր աշխարհի* և այլն:

Սակայն ոչ միշտ են գրքային դարձվածքներն օժտված հանդիսավորությամբ, հանդիպում են նաև չեզոք դարձվածքներ, ինչպես՝ *լիության եղջյուր, կախման կետեր դնել, կաղապարի մեջ դնել, կամուրջներն այրել, քայլող հանրագիտարան, կլոր սեղան, կյանքի և մահվան միջև, հրապարակ հանել* և այլն: Այս խմբին որոշ վերապահումով կարելի է դասել նաև թևավոր խոսքերը /սաստվածաշնչյան արտահայտություններ/, որոնք այսօր ավելի ու ավելի են ներթափանցում բանավոր, մասնավորապես խոսակցական լեզու՝ հարըստացնելով, գեղեցկացնելով և առավել պատկերավոր դարձնելով այն:

Գրքային դարձվածքներ են առաջանում նաև տարբեր լեզուներից կատարված դարձվածաբանական պատճենման ճանապարհով, ինչպես՝ *Ժամանակ սպանել, սատույցը կոտրել, Ամերիկա հայտնաբերել, բալզակյան տարիք, առաջին ջուրթակ, կարապի երգ* և այլն:

Այս երեք խմբերի օրինակներից ակնհայտ է դառնում, որ առավել լայնորեն կիրառելի և բառապաշարի ակտիվ մասն են կազմում խոսակցական լեզվին բնորոշ դարձվածքները, ոճական առումով չեզոք դարձվածքները նույնպես շատ են կիրառվում, իսկ գրքային դարձվածքները գործածության լայն շրջանակներ չունեն:

Ելնելով դարձվածքների ձևաբանական կառուցվածքից՝ հայերենում սովորաբար տարբերակվում են անվանական և բայական դարձվածքներ (նայած, թե վերջին, գլխավոր բաղադրիչը ինչ խոսքի մասով է արտահայտված):

Անվանական դարձվածքները կազմվում են գոյականով, ածականով, դերանունով, թվականով, որոշ դերբայներով, շատ դեպքերում դրանց կազմությանը մասնակցում են կապեր, շաղկապներ, ձայնարկություններ:

Պետք է նկատել, որ այս խոսքի մասերով կազմված դարձվածաբանական միավորներից առավել գործածական են գոյականով, ածականով ու որոշ դերբայներով կազմված դարձվածքները:

ա. Գոյականով՝ *գրչի մշակ, կարապի երգ, խաչի քավոր /մկրտության Ժամանակ խաչը ջրից հանողը/, հին ոսկոր, բաց նամակ, բռնացքը գլխին, գլուխը քարը, գործի մարդ, գալլի ախորժակ, աչքի փուշ, շուն ու գելի բածին, Նոր տարվա լիմոնադ, յոթերորդ երկինք, հալած յուղ, կարճ ուղեղով* և այլն:

բ. Ածականով՝ *մեջքը ամուր, երեսը բաց, երեսը պինդ, երեսը փափուկ, միտքը ծուռ,*

խելքը կարճ, վիզը ծուռ, գլուխը դատարկ, խելքից պակաս, ծալը պակաս, սիրտը սև և այլն:

Գ. Դերբալով՝ մազը կտրած, էշ արածեցնող, էշի ականջում քնած, աչք մտնող, աչք ծակող, խելքը թոցրած և այլն:

դ. Կապով ձևավորված կապակցություններ՝ մահու չափ, մեռածի պես, շամ մմամ, ձեռքի տակ, հոգու վրա, գլխից դուրս և այլն:

Գեղարվեստական գրականությունից բերենք անվանական դարձվածքի կիրառության մի գեղեցիկ օրինակ. «Ծատ չտեսեց, մա գրավեց բոլոր այցելուների և ամառաթի բնակիչների համակրությունը. մանավանդ մրա հայացքը ավելացավ, երբ որ ամենքն իմացան, թե Սաքոն մովրովի երկու աչքի լույսն է» (ՊՊ, Երկեր, Ե., 1984, էջ 42):

Բայական դարձվածքներ

Հայերենի դարձվածքների մեծ մասի գլխավոր բաղադրիչն արտահայտված է բայով: Եվ պետք է ասել, որ գրական և խոսակցական լեզուներում առավել-տարածված են բայական դարձվածքները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ բայը առավել ազատորեն և բազմաթիվ կապակցման ձևեր ու եղանակներ ունի նյութական խոսքի մասերի հետ: Հայերենում կան բայեր, որոնք մեծ քանակությամբ դարձվածքների բաղադրիչ են դառնում, ինչպես՝ *անել*, *տալ*, *գալ*, *ասել*, *առնել*, *գալ*, *դնել* և այլ բայեր: Այսինքն, կան դարձվածքներ կազմող գործուն և ոչ գործուն բայ-բաղադրիչներ:

Օրինակ՝ *օրը սև անել*, *սև սուգ անել*, *իրենով անել*

երես տալ, *գլխին տալ*, *ձեռք տալ*, *հոգին տալ*, *խոսք տալ*

խելքի գալ, *ուշքի գալ*, *դարձի գալ*, *աչքի գալ*

աչքի առաջ ունենալ, *սիրտ ունենալ*, *երեսատեղի ունենալ*

սիրտ առնել, *երես առնել*, *ձեռք առնել*, *հոգին առնել*

Որպես օրինակ՝ բերենք Պերճ Պոռշյանի «Հացի խնդիր» վեպից մի բնորոշ հատված, որը հագեցած է վառվռում, պատկերավոր դարձվածքներով. «Սաքոն լավ գիտի, որ մախըրչին չէ՝ տանուտերն էլ չի համարձակվիլ յուր մի *կոպեկն ուտել*. բացի դրանից, կողմնակի ճանապարհով մախըրչու տասը մանեթի մեծ մասը յուր *գրպանն է մտել*, ում ինչ տվել է մախըրչին, Սաքոյի ձեռքովն է անցկացել» (ՊՊ, Երկեր, Ե., 1984, էջ 43):

Գործուն բայ-բաղադրիչներին զուգահեռ կան բայեր, որոնք մեկ-երկու դարձվածքային բառակապակցություններում են համդիպում: Օրինակ՝ շամ լափ *թափել*, շնից մազ *պոկել*, հոգու հետ *խաղալ*, ականջները *սրել*, լում ուղտ *շինել*, գլուխը *կորցնել* և այլն: Այդպիսի բառակապակցություններ շատ են համդիպում կրոնական բովանդակություն ունեցող դարձվածքների մեջ. օրինակ՝ Աստված ողորմի *հոգուն* /բարեմաղթություն մեռած հարգելի մարդու մասին, որին հիշում են խոսելիս/, օրհնյալ է Աստված /փառք Աստծու/, խաչը պղծել /քրիստոնեական դավանանքին հակառակ բան անել կամ գործել/, խաչը կրել /սեփական հոգսերը, հարցերը սեփական ուժերով լուծել/, օրհնյալ ի Տեր /ողջույնի արտահայ-

տությոյն, որով դիմում եմ քաճանային/:

«Ասում եմ, որ ոչ մի գինեվաճառ չի կարողացել երկու-երեք ամսից ավելի պահել Սաքոյին, մեր գալուստ լակոսը մոր կոճակ կտրող է եղել, աչքի տուրմա թոցնող. ոչ միայն հաճախորդների գրպաններից անհայտացել եմ նրա օրովը զանազան մանր-մունր առարկաներ, գինեվաճառի ծոցից կամ գլխատակիցն էլ, գիշերը քնած ժամանակը թռել վերացել է նրա քսակը: Էլ ո՞վ էր գծվել Սաքոյի հետ երկար կյանք վարել» (ՊՊ, Երկեր, Ե., 1984, էջ 41-42): Այս հատվածում մենք հանդիպում ենք ժողովրդի վառ երևակայության այնպիսի չքնաղ և անկրկնելի արտահայտությունների, ինչպիսիք են մոր կոճակ կտրող, որ նշանակում է գող, թալանչի, կամ աչքի տուրմա թոցնող, որ ճարպիկ, անպատկառ իմաստն ունի, երկար կյանք վարել - նշանակում է միասին աշխատել: Բերենք կրոնական/եկեղեցական/ դարձվածքների կիրառության գրական օրինակներ. «Օրհնյալ լինի քո ծնունդը, ասեց մեճծ տերտերը, երբու դռնբացեքը դու արիր, հիմի էլ խաչին քավոր ես դառնում» /ՊՊ, Երկեր, Ե., 1984, էջ 32/:

Առը շո՛ւտ տուր, խոփիդ դուրբան,

Օրհնյալ է Աստված, հորովել:

/ՀԹ, Երկեր, հ. 1, Ե., 1985, էջ 31/

Այս և նմանատիպ դարձվածքները կրում են անհատական-հեղինակային բնույթ և եթե հաջողված են, ներթափանցում են խոսակցական լեզու՝ դառնալով նրա անբաժանելի մասը:

Ինչպես երևում է օրինակներից, դարձվածքների մեծ մասը մեմիմաստ է, սակայն շատ են հանդիպում նաև հոմանիշ ձևեր: Այս երևույթը մեկ անգամ ևս ցույց է տալիս նրանց առատությունն ու բազմազանությունը համագործածական բառապաշարում, ժողովրդի ազգային լեզվամտածողությունը, խոսքը պատկերավոր և առավել տպավորիչ դարձնելու ձգտումը:

Օրինակ՝ *խելքից պակաս - խելքը կարճ*

գլխի ընկնել - մատը կծել

խելքի գալ - խելքը գլուխը հավաքել

հոգին տալ - սիրտը դնել

լուռ ուղտ շինել - մազը գերան սարքել

հոգին ավանդել - ոտքերը ձգել- շունչը փչել

Հայերենի դարձվածքները հիմնականում ունեն նաև իրենց մեկ բառով արտահայտված հոմանիշ ձևերը գրական լեզվում: Դա մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որ դարձվածքներն օգտագործվում են ոչ թե լեզվում այլ տարբերակներ չունենալու, այլ խոսքը հյութալի և պատկերավոր դարձնելու համար:

Օրինակ՝ *գլխի ընկնել - հասկանալ*

աչքից ընկնել - հիասթափվել

գլխին տալ - ափսոսել, փոշմանել

հոգին հանել - չարչարել

սիրտ տալ - հանգստացնել, խրախուսել

Տալիսի ընկնել - հոգնել

Դարձվածքային միավորի փոխարինումը հոմանիշ ձևով ակնհայտորեն աղքատացնում և անգույն է դարձնում խոսքը, քանի որ այս դեպքում կորչում է դրա այլաբանական իմաստը; կորչում է խոսողի գնահատողականությունն ու զգացմունքայնությունը: Եթե բաժնավոր խոսքում այս հատկանիշներն ինչ-որ չափով կարող են արտահայտվել խոսողի հնչեղանքի օգնությամբ, ապա գրավոր խոսքը զուրկ է մասնալի հնարավորությունից:

Դարձվածքների առաջացման հիմնական ուղիները

Որպես կանոն՝ դարձվածքներն առաջանում են բառակապակցությունների փոխաբերական վերաիմաստավորման հետևանքով: Ազատ բառակապակցության և դրա հիմքի վրա առաջացած դարձվածքի միջև որպես կապ ծառայում է պատկերավոր մոտաճողությունն արտացոլող բառի ներքին կառուցվածքը կամ ձևը, որը ենթակա է հետագա վերաիմաստավորման:

Ըստ ուսման լեզվաբաններ Պ. Լեկանտի, Վ. Ժուկովի, Ն. Գուցովայի՝ ներքին կառուցվածքի տեսանկյունից բառերը չեն ենթարկվում իմաստաբանական որևէ փոփոխության, իսկ որպես դարձվածք՝ դրանք վերափոխվում, վերածնվում են: Սրանից հետևում է, որ բառերի ներքին կառուցվածքը դարձվածաբանական իմաստի հիմնական մասը չի կազմում: Ազատ բառակապակցությունները վերակազմավորվում են որպես դարձվածքներ միայն այն դեպքում, երբ դրանք դառնում են վերաիմաստավորման պատճառականության ուղղությունը ցույց տվող ներքին կառուցվածքի մյուսական արտահայտությունը: Ներքին կառուցվածքի շնորհիվ տեղի է ունենում արտաքին, այսինքն՝ ձայնային կաղապարի (ազատ բառակապակցության ձևով) միաձուլումը նոր դարձվածաբանական իմաստի հետ³:

Դարձվածքների մի մասն առաջանում է առածների կամ ասացվածքների կրճատման, սեղմման հետևանքով, որը կատարվում է հիմնականում բանավոր խոսքում. օրինակ՝ ոտքի տակ փորել - «Ուրիշի համար փոս փորողը ինքն է մեջն ընկնում», մի ծաղկով զարում - «Մի ծաղկով զարում չի գա», մարմանդ գետ - «Մարմանդ գետից վախեցիր», կուզեկուզ ման գալ - «Ձին հեծել, կուզեկուզ ման կգա» և այլն: Իհարկե, այս ճանապարհով առաջացած շատ քիչ թվով դարձվածքներ կան հայերենում:

Հաջորդ կարևոր ճանապարհը դարձվածքների պատմական, ինչպես մասնալի հիմքաբանական հիմքն է: Այսպես՝ *Տալիսի* կամ *հարց* դարձվածքը, որ մշակվում է անլուծելի, ձգձգվող խնդիր, ունեցել է կոնկրետ բովանդակություն՝ կապված հայոց պետականության ստեղծման խնդրի հետ, կամ՝ *անարգանքի պլանին գանել*, որ մշակվում է հանդիմանել, խայտառակել, հրապարակային անարգանքի ենթարկել, կապված է պատմական այն իրողության հետ, երբ Հին Աթենքում մարդուն պատժելու մատակցվել կապում էին քաղաքի կենտրոնում տեղադրված պլանին և հրապարակավ հանդիմանում: Այդպես են առաջա-

³ Տե՛ս «Современный русский литературный язык», М., 1982. стр. 66-68.

ցել լայնորեն կիրառվող թևավոր խոսքերը, որոնց հիմքում ընկած են հիմնականում հին հունական և հռոմեական առասպելները:

Ինչպես արդեն նշեցինք, դարձվածքներ կարող են առաջանալ նաև դարձվածաբանական միավորների պատճենման ճանապարհով, ինչպես նաև օտարալեզու նյութի հիման վրա: Փոխառյալ դարձվածքները կարող են օգտագործվել առանց թարգմանվելու, ինչպես՝ *finita la comedia* (խալվերեն), որ նշանակում է գործի անփառունակ ավարտ և այլն:

Խոսքում դարձվածաբանական միավորների կիրառությանը պետք է զգույշ և մտածված վերաբերվել՝ չծանրաբեռնելով դրանցով նախադասությունները և չխաթարելով նրանց կառուցվածքը: Հաճախ է հանդիպում իմաստով և կառուցվածքով իրար մոտ դարձվածքների ոչ ճիշտ կիրառություն: Օրինակ՝ համեմատենք *դեր կատարել* և *նշանակություն ունենալ* արտահայտությունները: *Դեր կատարել* դարձվածաբանական միավորում *կատարել* բայը պատահական չէ, որ դարձվածք է կազմել հատկապես *դեր* բառի հետ (բառակապակցությունը նախապես առաջացել է դերասանական միջավայրում): *Դեր* բառի փոխարինումը *նշանակություն* բառով խախտում է այդ բառակապակցության ներքին կառուցվածքը: Կամ *ձեռք առնել* և *ձեռ առնել* դարձվածքներն ունեն իմաստային տարբերություն: Առաջինը նշանակում է նախատեսել, դեկավարել, կազմակերպել, իսկ երկրորդը՝ ծաղրել. սակայն շատ է հանդիպում այս դարձվածքների ոչ ճիշտ գործածումը:

Խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ շատ դարձվածաբանական միավորներ կիրառվում են կառուցվածքային որոշակի փոփոխություններով՝ կազմելով հոմանիշ ձևեր, որոշ դեպքերում կրելով հեղինակային, անհատական բնույթ: Այս երևույթը բավականին տարածված է Խաչատուր Աբովյանի արձակում: Երբեմն գրողը ժողովրդական լեզվում գործածական առանձին դարձվածքների բաղադրիչներից մեկը որոշակի միտումով փոխում է, որի պատճառով թուլանում են տվյալ դարձվածքի ուժգնությունը և պատկերավորության աստիճանը: Օրինակ՝ «ամենքն իրենց էշն են քշում» արտահայտության փոխարեն վերցնում կիրառվում է «ամենն էլ իրանց ձին են քշում» դարձվածքը:

Վերջում անդրադառնանք այն կարևոր հարցին, թե արդյոք առածները, ասացվածքները, օրհանգքները, անեծքները դարձվածքներ՞ն են, թե՞ ոչ: Այս հարցը լեզվաբանության մեջ բազմաթիվ վեճերի տեղիք է տվել: Ելնելով այն հանգամանքից, որ սրանք լեզվական պատրաստի միավորներ են, ունեն այլաբանական-փոխաբերական իմաստ, շատ լեզվաբաններ այդ արտահայտությունները համարում են դարձվածաբանական միավորներ: Պետք է հաշվի առնել մեկ հանգամանք ևս. առածների, ասացվածքների կազմում կարող են լինել դարձվածքներ, օրինակ՝ «Ուրդը վերմակիդ չափով պարզիր», «Կարմիր կովը կաշին չի փոխի», «Գալլի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ շուտ արեք, ոչխարը սարն անցավ»: Ինչպես արդեն նշել ենք, մի շարք դարձվածքներ էլ առաջացել են հենց առածների և ասացվածքների հիման վրա: Ինչպես կարծում են լեզվաբաններ Պ. Բեդիրյանը, Լ. Եզեկյանը, առածները, ասացվածքները, թևավոր խոսքերն ու արտահայտությունները, մանավանդ նրանց ոճական երանգավորումներով ու արտահայտչականությամբ, պետք է դասել դարձվածքների շարքը և դիտել իբրև դարձվածքային արտահայտություններ, որոնք կազմված են իմաստային տեսանկյունից անբաժանելի, միևնույն ժամանակ ազատ

իմաստ ունեցող բաղադրիչ բառերից⁴:

Դարձվածքներ ստեղծվել և ստեղծվում են առ այսօր՝ լայնորեն կիրառվելով ոչ միայն խոսակցական լեզվում, այլ նաև գեղարվեստական գրականության մեջ՝ ընդգծելով ժողովրդի ազգային մտածողության, միատուկացի առանձնահատկությունները:

Օրինակ՝ Աղջի, Վարդիշաղ, թե *հոգիդ սիրես*,

Մի գարիդ գցիր, տես ի՞նչ է ասում,

Աչքս խավարի, տեսիլ դառնամ ես,-

Տեսիլք եմ տեսել գիշերս երազում:

(ՀԹ, Երկեր, Բ. 1, Ե., 1985, էջ 210)

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ և բազմաբնույթ ուսումնասիրությունները, դարձվածքներն իրենց բնույթով և արտահայտած իմաստային առանձնահատկություններով խորապես ժողովրդական ծագում ունեցող և առավելապես խոսակցական լեզվում կիրառվող լեզվական միավորներ են, որոնք գունեղացնում և պատկերավոր են դարձնում լեզուն՝ խթանելով նրա զարգացմանը և հարստացնելով այն:

⁴ Տե՛ս Լ. Եգեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, էջ 185-188: